Կրկնակի հրավերներ նախկին կրթաթոշակակիրների համար

Նպատակը՝

- Ստեղծված կապերի պահպանման համար DAAD¬ի նախկին կրթաթոշակակիրները, կամ այն կրթաթոշակակիրները, ովքեր առնվազն մեկ տարի սովորել են նախկին ԳԴՀ¬ում կարող են դիմել կրկնակի հրավերի համար՝ գերմանական որևէ բուհում կամ արտահամալսարանական որևէ հաստատությունում գիտահետազոտական աշխատանք կատարելու համար:

Տևողությունը՝

- Կախված Գերմանիայում իրականացվելիք ծրագրից՝ կրթաթոշակ կարող է տրամադրվել մեկից երեք ամսով: Կրթաթոշակը ուժի մեջ կարող է մտնել 2013թ.-ի հունիսի 1-ից ոչ շուտ:

Կրթաթոշակային վճարումներ՝

- Կրթաթոշակ, որի չափը կախված կլինի դիմորդի ակադեմիական աստիճանից, ասիստենտների համար՝ 2000 եվրո, երիտասարդ դոցենտների և պրոֆեսորների համար՝ 2150 եվրո, բացառիկ դեպքերում՝ նաև 2300 եվրո:
- Ճանապարհածախս

Դիմելու համար անհրաժեշտ պայմանները՝

- DAAD-ի կրկնակի հրավերներ ծրագրին կարող են դիմել նախկին կրթաթոշակառուներ, ովքեր վերադարձել են իրենց հայրենիք՝ առնվազն երեք տարի առաջ:
- Ընտրության համար կարևոր չափանիշ է Գերմանիայում իրականացվելիք գիտահետազոտական աշխատանքի համոզիչ հիմնավորումը: Գիտահետազոտական աշխատանքը պետք է լինի լավ պլանավորված և համաձայնեցված գերմանացի գործընկերոջ հետ: Փաստաթղթերին պետք է կցված լինի նաև սույն փաստը հավաստող նամակ՝ գերմանացի գործընկերոջից: Նամակից պետք է նաև հստակորեն պարզ լինի հյուրընկալող հաստատության պատրաստակամությունը՝ աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու մասին:
- DAAD¬ի գիտահետազոտական գործուղումներ կրթաթոշակային ծրագրին իրավունք է տրվում դիմել միայն երեք տարին մեկ անգամ:

Դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերը՝

Դիմումի ձև ներկայցվում է on-line – տարբերակով, **MOVE**-համակարգով (www.funding-guide.de)

Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել նաև թղթային տարբերակով՝ երեք օրինակից :

- Դիմումի ձև՝ www.funding-guide.de, MOVE-համակարգով, գրանցվելուց և դիմումաձևը լրացնելուց հետո պետք է վերբեռնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք ներկայացված են ստորև: **Մանրամասները նայել նաև daad.am հայաստանյան կայք - էջում**
- Կենսագրություն
- Գիտահետազոտական նպատակի շարադրանք
- Գիտական հրապարակումների ցանկ
- Գերմանիայում գտնվելու ժամանակացույց և տեղացույց
- Գիտական աստիճանի շնորհագրի (թեկնածուի վկայականի) պատճեն կամ բուհի վկայականի պատճենը և թարգմանությունը
- Գերմանացի գործընկերոջ հրավեր

Համապատասխան վկայականները պետք է վերբեռնել միայն նշված վերնագրի տակ:

Բոլոր փաստաթղթերը պետք է հանձնել առանց ամրակների, միակողմանի տպված: Լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում և խնդրում ենք նաև չվերբեռնել:

Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի նոյեմբերի 10-ը